

ԱՐՄՍՏԱՏ (ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ)

## ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
2023Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏԻՆ




ԹԻՎ 3

**Սպառողական գների փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում  
2023թ. հունվար-մարտին \***

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը (2023թ. մարտը 2022թ. մարտի նկատմամբ) կազմել է 5.4%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ արձանագրվել է 0.7% գնանկում:

Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՍԸՆԴ) երկու նիշ մակարդակ	2023թ.			
	մարտը		հունվար-մարտը 2022թ. հունվար-մարտի նկատմամբ,%	մարտը 2022թ. դեկտեմբերի նկատմամբ, ինդեքս
	2022թ. մարտի նկատմամբ, %	2023թ. փետրվարի նկատմամբ,%		
00 Սպառողական գների ինդեքս-ընդամենը այդ թվում՝	5.4	-0.7	7.2	100.8
01 սննդամթերք և ոչ ակոհոլային խմիչք	5.1	-2.2	8.1	101.3
02 ակոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	8.3	0.5	9.1	102.5
03 հագուստ և կոշիկ	7.4	-0.2	7.5	99.2
04 բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	4.2	-0.1	6.4	99.8
05 տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	11.3	-0.2	12.6	100.7
06 առողջապահություն	5.1	1.1	4.2	103.3
07 տրանսպորտ	2.5	1.4	3.0	97.5
08 կապ	0.3	0.0	0.5	99.9
09 հանգիստ և մշակույթ	11.2	1.4	11.9	104.0
10 կրթություն	4.7	0.0	4.7	100.0
11 ռեստորաններ և հյուրանոցներ	9.0	0.1	9.3	101.0
12 տարբեր ապրանքներ և ծառայություններ	10.3	0.2	11.5	100.5

**Սպառողական գների փոփոխությունները 2023թ. մարտին 2015թ. նկատմամբ \*\***




\* Սույն վերլուծականում հիմնականում տրված է Հայաստանի Հանրապետությունում 2023թ. մարտի գնային փոփոխությունների հակիրճ մեկնաբանությունը: Սպառողական գների ինդեքսի ավելի ընդարձակ տեղեկատվությունը գետեղվում է «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում» ամսական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1300-305):

\*\* Եվրոստատի կողմից սահմանված ինդեքսի հղման ժամանակաշրջան


2023թ. հունվար-մարտին սպառողական գների միջին ամսական հավելվածը կազմել է 0.3% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 1.2% հավելված):

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2023թ. մարտին փետրվարի համեմատ սպառողական գները նվազել են 1.3-0.1%-ով, այդ թվում, գնանկման համեմատաբար բարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Գյումրիում: Մայրաքաղաքում սպառողական գները նվազել են 0.7%-ով:

Ենթահնդեքսների տոկոսային փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2023թ. մարտին (նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)



Ենթահնդեքսների տոկոսային փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2023թ. մարտին (նախորդ ամսվա նկատմամբ)




Սպառողական գների փոփոխություններն ըստ սպառման հիմնական խմբերի


	2023թ.			
	մարտը		հունվար-մարտը 2022թ. հունվար-մարտի նկատմամբ, %	մարտը 2022թ. դեկտեմբերի նկատմամբ, ինդեքս
	2022թ. մարտի նկատմամբ, %	2023թ. փետրվարի նկատմամբ, %		
Սպառման ապրանքներ	5.2	-1.2	7.3	100.6
<i>այդ թվում՝</i>				
սննդամթերք, խմիչք և ծխախոտ	5.4	-1.9	8.1	101.4
ոչ պարենային ապրանքներ	4.6	0.2	5.4	98.9
Ծառայություններ	6.0	0.4	6.9	101.2

Սպառողական գների հավելվածը 2014-2023թթ. մարտին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



Սպառողական գների ինդեքսի տոկոսային փոփոխությունները նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ 2019-2023թթ.



**Սննդամթերքի գներ:** 2023թ. մարտին 2022թ. մարտի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 5.1% գնաճ, իսկ 2023թ. փետրվարի համեմատ՝ 2.2% գնանկում:

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2023թ. մարտին փետրվարի համեմատ սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի գները նվազել են 3.3-1.3%-ով (գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Գյումրիում): Մայրաքաղաքում սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի գները նվազել են 2.2%-ով:

Պարենային հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները և ազդեցությունները սպառողական գների ինդեքսի վրա 2023թ. մարտին

	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2023թ. մարտը		2023թ. մարտը	
	2022թ. մարտի նկատմամբ	2023թ. փետրվարի նկատմամբ	2022թ. մարտի նկատմամբ	2023թ. փետրվարի նկատմամբ
	+/-, %		+/-, տոկոսային կետ	
Հացաբուլկեղեն և ձավարեղեն	6.0	-1.8	0.488	-0.153
Միս	7.5	-1.3	0.667	-0.134
Չուկ և ծովամթերք	-0.6	0.0	-0.005	0.000
Կաթնամթերք, պանիր և ձու	8.7	-1.7	0.423	-0.093

	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2023թ. մարտը		2023թ. մարտը	
	2022թ. մարտի նկատմամբ	2023թ. փետրվարի նկատմամբ	2022թ. մարտի նկատմամբ	2023թ. փետրվարի նկատմամբ
	+/-, %		+/-, տոկոսային կետ	
Յուղեր և ճարպեր	-6.0	-3.5	-0.183	-0.095
Միրգ	8.7	-1.8	0.334	-0.080
Բանջարեղեն	-0.7	-5.3	0.094	-0.343
Շաքար, մրգախյուս, մեղր, օշարակներ, շոկոլադ և շաքարային հրուշակեղեն	3.1	-0.5	0.057	-0.011
Մսնդամթերք, չնեռաոված ուրիշ խմբավորումներում	3.2	-0.7	0.010	-0.002
Մուրճ, թեյ և կակաո	4.7	-0.2	0.076	-0.002
Հանքային կամ աղբյուրի ջուր. շշայցված խմելու ջուր	8.2	0.7	0.032	0.003
Օղի	10.5	0.8	0.166	0.013
Գինի	1.9	0.8	0.013	0.005
Գարեջուր	4.7	-0.1	0.011	0.000
Ծխախոտային արտադրատեսակներ	8.8	0.2	0.144	0.005

Հնդկացորենի գինը 2023թ. մարտին 2022թ. մարտի համեմատ նվազել է 9.2%-ով, ոսպինը՝ 5.3%-ով, բրնձինը՝ 3.1%-ով, լոբունը՝ 2.7%-ով, ալյուրինը՝ 2.6%-ով, ուլոռինը՝ 0.2%-ով, իսկ 2023թ. փետրվարի համեմատ՝ համապատասխանաբար 4.9%, 1.9%, 1.3%, 0.5% 2.8% և 3.3%-ով:

2023թ. մարտին 2022թ. մարտի համեմատ հանրապետությունում արձանագրվել է հաճարի՝ 2.1%, բլդուրի՝ 3.6%, ձավարի՝ 4.8%, հացի՝ 7.3%, մակարոնեղենի՝ 7.6% գնաճ, իսկ 2023թ. փետրվարի համեմատ՝ համապատասխանաբար 1.0%, 0.8%, 2.2%, 1.9%, 1.2% գնանկում:

Շաքարի և շաքարավազի ապրանքախմբում 2023թ. մարտին 2022թ. մարտի համեմատ արձանագրվել է 10.9%, իսկ 2023թ. փետրվարի համեմատ՝ 1.9% գնանկում:

2023թ. մարտին 2022թ. մարտի համեմատ գրանցվել է տավարի մսի 18.9% գնաճ և խոզի մսի՝ 13.8% գնանկում, իսկ 2023թ. փետրվարի համեմատ՝ 0.6% և 10.6% գնանկում:

Ձվի գինը 2023թ. մարտին 2022թ. մարտի համեմատ նվազել է 1.1%-ով, իսկ 2023թ. փետրվարի համեմատ՝ 5.8%-ով:

Մարգարինի և պանրի գները 2023թ. մարտին 2022թ. մարտի համեմատ աճել են 10.8% և 15.4%-ով, իսկ 2023թ. փետրվարի համեմատ գրանցվել է 3.0% և 0.5% գնանկում:

2023թ. մարտին 2022թ. մարտի համեմատ արևածաղկի բուսական յուղի և կարագի գները նվազել են 20.0%-ով և 0.1%-ով, իսկ 2023թ. փետրվարի համեմատ՝ 6.8% և 0.3%-ով:

2023թ. մարտին 2022թ. մարտի համեմատ կարտոֆիլի գինն աճել է 4.5%-ով, վարունգինը՝ 12.0%-ով, իսկ ճակնդեղի և գազարի գները նշված ժամանակահատվածում նվազել են համապատասխանաբար 20.9% և 14.0%-ով: 2023թ. մարտին փետրվարի համեմատ հանրապետությունում արձանագրվել է նշված ապրանքատեսակների համապատասխանաբար 4.0%, 18.1%, 3.7% և 13.0% գնանկում:


Դրան զուգընթաց, թռչնամսի գինը 2023թ. մարտին 2022թ. մարտի համեմատ աճել է 1.6%-ով, գառան մսինը՝ 3.4%-ով, թթվասերինը՝ 6.2%-ով, թարմ կաթինը՝ 8.4%-ով, իսկ 2023թ. փետրվարի համեմատ՝ համապատասխանաբար 0.6%, 0.1%, 0.2% և 1.1% ով:

2023թ. մարտին փետրվարի համեմատ մրգի և բանջարեղենի ապրանքախմբերի միջին կշռված գնանկումը կազմել է 3.79%: Վերը նշված ապրանքախմբերը սպառողական զամբյուղում ունենալով 9.38% տեսակարար կշիռ, նշված ժամանակահատվածում նպաստել են սպառողական գների ընդհանուր մակարդակի նվազմանը 0.32 տոկոսային կետով:

Բանջարեղենի ապրանքախմբում 2023թ. մարտին 2022թ. մարտի համեմատ արձանագրվել է 0.7%, իսկ 2023թ. փետրվարի համեմատ՝ 5.3% գնանկում:

Բանջարեղենի գների փոփոխությունները 2021-2023թթ. հունվար-մարտին<sup>1</sup>


նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



Մրգի ապրանքախմբում 2023թ. մարտին 2022թ. մարտի համեմատ գներն աճել են 8.7%-ով, իսկ 2023թ. փետրվարի համեմատ արձանագրվել է 1.8% գնանկում:

Մրգի գների փոփոխությունները 2021-2023թթ. հունվար-մարտին<sup>1</sup>

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



**Ոչ պարենային ապրանքների գներ:** 2023թ. մարտին 2022թ. մարտի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 4.6%, իսկ 2023թ. փետրվարի համեմատ՝ 0.2% գնաճ:

Որոշ ոչ պարենային ապրանքախմբերի գների փոփոխությունները և ազդեցությունները սպառողական գների ինդեքսի վրա 2023թ. մարտին

	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2023թ. մարտը		2023թ. մարտը	
	2022թ. մարտի նկատմամբ	2023թ. փետրվարի նկատմամբ	2022թ. մարտի նկատմամբ	2023թ. փետրվարի նկատմամբ
	+/-, %		+/-, տոկոսային կետ	
Հագուստ	6.7	-0.7	0.067	-0.014
Կոշիկ տարբեր տեսակի	8.8	0.7	0.070	0.008
Նյութեր բնակարանի նորոգման և սպասարկման համար	4.2	-0.2	0.018	0.000
Կահույք և կահավորանք	7.2	0.5	0.034	0.002

<sup>1</sup> 2023թ. փետրվար-մարտին 2022թ. փետրվար և մարտ ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների փոփոխությունների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:


	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2023թ. մարտը		2023թ. մարտը	
	2022թ. մարտի նկատմամբ	2023թ. փետրվարի նկատմամբ	2022թ. մարտի նկատմամբ	2023թ. փետրվարի նկատմամբ
	+/-, %		+/-, տոկոսային կետ	
Խոշոր կենցաղային սարքեր, էլեկտրական և ոչ էլեկտրական	6.2	0.4	0.031	0.002
Կենցաղային փոքր էլեկտրական սարքեր	5.5	0.5	0.004	0.000
Ապակե ամանեղեն, ճաշասպասք և տնային կահ-կարասի	8.2	0.2	0.025	0.001
Խոշոր գործիքներ և հարմարանքներ	1.1	-0.7	0.000	0.000
Ձեռքի գործիքներ և տարբեր հարմարանքներ	4.8	0.2	0.005	0.000
Կարճատև օգտագործման կենցաղային ապրանքներ	15.4	-0.6	0.365	-0.014
Դեղագործական ապրանքներ	2.7	0.3	0.069	0.010
Բժշկական նշանակության այլ արտադրանք	5.5	0.8	0.014	0.002
Բժշկական սարքավորումներ և սարքեր	4.4	0.3	0.024	0.001
Վառելիքային և քսանյութեր անձնական փոխադրամիջոցների համար	-2.6	1.4	-0.123	0.070
Միջոցային այգեգործություն	-1.6	9.6	0.007	0.008
Ոսկերչական զարդեր	-14.5	2.3	-0.020	0.002
Անձնական գործածության այլ ապրանքներ	5.2	-0.4	0.019	-0.001

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2023թ. մարտին փետրվարի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.1-0.4% գնաճ: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ աճել է 0.2%-ով:

2023թ. մարտին փետրվարի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են 7.0% և 1.5%-ով: 2023թ. մարտին 2022թ. մարտի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի՝ 26.9% և 2.8%, իսկ 2022թ. դեկտեմբերի համեմատ՝ 14.4% և 6.1% գնանկում:

Բենզինի և դիզելային վառելիքի միջին ամսական գների փոփոխությունները 2020-2023թթ.

2015թ. նկատմամբ



**Ծառայությունների սակագներ:** Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2023թ. մարտին 2022թ. մարտի համեմատ սակագներն աճել են 6.0%-ով, իսկ 2023թ. փետրվարի համեմատ՝ 0.4%-ով:



**Որոշ ծառայությունների ենթախմբերի սակագների փոփոխությունները և ազդեցությունները սպառողական գների ինդեքսի վրա 2023թ. մարտին**

	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2023թ. մարտը		2023թ. մարտը	
	2022թ. մարտի նկատմամբ	2023թ. փետրվարի նկատմամբ	2022թ. մարտի նկատմամբ	2023թ. փետրվարի նկատմամբ
	+/-, %		+/-, տոկոսային կետ	
Հագուստի մաքրում, նորոգում և վարձույթ	9.0	0.7	0.001	0.000
Կոշիկի նորոգում և վարձույթ	12.0	2.2	0.001	0.000
Բնակարանի նորոգման և սպասարկման ծառայություններ	10.2	0.7	0.006	0.000
Կահույքի, տնային գործածության առարկաների նորոգում	3.7	0.0	0.001	0.000
Կենցաղային սարքերի նորոգում	4.3	0.0	0.002	0.000
Բժշկական ծառայություններ	6.7	1.7	0.309	0.089
Տրանսպորտի ծառայություններ	17.2	1.5	0.378	0.033
Փոստային ծառայություններ	5.8	0.0	0.001	0.000
Հանգստի և սպորտային միջոցառումների հետ կապված ծառայություններ	20.5	0.0	0.003	0.000
Հանգստի կազմակերպման համալիր ծառայություններ	17.4	3.5	0.088	0.002
Նախադարձական և տարրական կրթություն	5.7	0.0	0.010	0.000
Բարձրագույն կրթություն	4.6	0.0	0.159	0.000
Սպասարկման ծառայություններ	9.2	0.1	0.096	0.002
Հյուրանոցային ծառայություններ	7.7	-0.4	0.001	-0.001
Վարսավիրանոցների և անձնական սպասարկման սրահների ծառայություններ	2.9	0.0	0.012	0.000
Ֆինանսական այլ ծառայություններ, չներառված ուրիշ խմբավորումներում	21.4	1.9	0.123	0.014

Հանրապետության դիտարկվող 10 քաղաքներում 2023թ. մարտին փետրվարի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների սակագներն աճել են 0.1-1.3%-ով, իսկ մեկում գրանցվել է 0.2% նվազում: Մայրաքաղաքում բնակչությանը մատուցված ծառայությունների սակագներն աճել են 0.4%-ով:

**Արտարժույթի շուկա:** 2023թ. մարտին փետրվարի համեմատ սպառողական գները և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը նվազել են 0.7% և 1.3%-ով (ՀՀ դրամն արժևորվել է): 2023թ. մարտին 2022թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է սպառողական գների 0.8% հավելած և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 1.5% նվազում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել է սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ 3.5% և 2.4% հավելած: 2023թ. մարտին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 388.4 դրամ, ինչը 21.8%-ով ցածր է 2022թ. մարտի համապատասխան ցուցանիշից (497.0 դրամ):

**ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ**





Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական գների  
տոկոսային փոփոխությունները ՀՀ-ում

	2023թ.			
	փետրվարը		մարտը	
	2023թ. հունվարի նկատմամբ	2022թ. փետրվարի նկատմամբ	2023թ. փետրվարի նկատմամբ	2022թ. մարտի նկատմամբ
Խնձոր	-4.7	50.0	-8.2	40.4
Տանձ	-4.9	22.1	-1.0	15.8
Նուռ	6.0	19.2	9.6	24.9
Խաղող	0.2	-8.6	6.1	-5.1
Աղամաթուզ (բանան)	-2.1	13.4	10.3	10.3
Նարինջ	-4.7	22.2	-6.4	15.4
Մանդարին	7.1	16.8	-3.1	3.0
Կիտրոն	0.8	4.0	-1.9	-0.2
Ելակ	7.3	-9.0	-5.4	-15.0
Կաղամբ	5.7	-65.9	-8.5	-67.0
Կանաչ սոխ	-4.9	-25.3	-21.6	-35.8
Խառը կանաչեղեն	6.5	1.7	-9.7	1.3
Լոլիկ	5.1	21.9	0.7	9.4
Վարունգ	4.9	31.7	-18.1	12.0
Սմբուկ	-3.1	-30.6	-0.4	-33.3
Պղպեղ	14.5	14.2	16.4	13.5
Գազար	3.8	-3.3	-13.0	-14.0
Ճակնդեղ	2.6	-11.9	-3.7	-20.9
Գլուխ սոխ	35.0	24.0	6.9	24.3
Սխտոր	-4.2	-7.6	-11.8	-19.8
Մունկ	-4.0	8.0	-2.0	2.2
Կարտոֆիլ	4.7	11.1	-4.0	4.5

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում <sup>1</sup>

	2022թ. դեկտեմբերը 2021թ. դեկտեմբերի նկատմամբ	2023թ.		փետրվարը 2022թ. փետրվարի նկատմամբ
		հունվարը նախորդ ամսվա նկատմամբ	փետրվարը նկատմամբ	
Եվրասիական տնտեսական միություն (ԵԱՏՄ)	112.9	100.9	100.6	112.3
Հայաստան	108.3	101.4	100.1	108.1
Ռուսաստան	111.9	100.8	100.5	111.0
Բելառուս	112.8	100.8	101.3	111.7
Ղազախստան	120.3	101.1	101.3	121.3
Ղրղզստան	114.7	101.5	101.5	116.2
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-27) <sup>1</sup>	110.4	100.2	100.8	109.9
Ավստրիա	110.5	100.9	100.8	111.0
Բելգիա	110.2	98.3	100.3	105.4
Բուլղարիա	114.3	101.2	100.7	113.7
Հունգարիա	125.0	102.4	100.8	125.8
Գերմանիա	109.6	100.5	101.0	109.3
Հունաստան	107.6	99.5	100.2	106.5
Դանիա	109.6	100.5	100.8	108.3
Իռլանդիա	108.2	99.0	101.5	108.1
Իսպանիա	105.5	99.6	100.9	106.0
Իտալիա	112.3	98.5	100.1	109.8
Կիպրոս	107.6	98.6	100.8	106.7
Լատվիա	120.7	100.5	100.6	120.1
Լիտվա	120.0	100.6	100.7	117.2
Լյուքսեմբուրգ	106.2	99.7	101.4	104.8
Մալթա	107.3	99.6	100.9	107.0
Նիդերլանդներ	111.0	98.1	101.3	108.9
Լեհաստան	115.3	102.0	101.1	117.2
Պորտուգալիա	109.8	99.2	100.4	108.6
Ռումինիա	114.1	100.8	101.0	113.4
Սլովակիա	115.0	102.8	101.1	115.4
Սլովենիա	110.8	99.9	100.6	109.4
Ֆինլանդիա	108.8	100.5	100.7	108.0
Ֆրանսիա	106.7	100.4	101.1	107.3
Խորվաթիա	112.7	100.3	100.3	111.7
Չեխիա	116.8	106.6	100.8	118.4
Շվեդիա	110.8	98.2	101.0	109.7
Էստոնիա	117.5	100.6	100.7	117.8
Այլ երկրներ				
Կանադա	106.3	100.5	100.4	105.3
Նորվեգիա	106.3	99.9	100.4	107.2
Միացյալ Թագավորություն	110.5	99.4	101.2	110.5
ԱՄՆ	106.5	100.8	100.6	106.0
Թուրքիա	164.3	106.7	103.1	155.2
Ուկրաինա	126.6	100.8	100.7	124.9
Մոլդովա	130.2	100.5	100.9	125.9
Վրաստան	109.8	100.8	99.7	108.1
Շվեյցարիա	102.7	100.7	100.5	103.2
Ճապոնիա	104.0	100.5	99.4	103.3

«Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2023թ. հունվար-ապրիլին» մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն «2023 թվականի վիճակագրական ծրագրի», նախատեսված է 2023թ. մայիս ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-305, Մաս 3, էջ 152):

<sup>1</sup> Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ: